VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. *ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:*

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	ԱՅՈ/ **78,9**
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	ԱՅՈ/ **67,8**

Վերլուծենք ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ:

Որակյալ ենթակառուցվածքների ստեղծումը ԵՊՀ ԻՄ-ի 2011-2015թթ. ՌԾ-ի նպատակներից է **/ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2011-2015 թթ., նպատակ V/**: 2014 թ. ապրիլի 1-ի դրությամբ մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորում են շուրջ 1600 ուսանողներ, որոնց համար կրթական ծրագրերը կազմակերպվում են 3 մասնաշենքերի 55 լսարաններում: Մասնաճյուղի ունեցած ուսումնական տարածքները երկհերթ ուսուցմամբ լիովին բավարարում են լիցենզավորման համար ՀՀ ԿԳ նախարարության կողմից ներկայացվող պահանջներին */ԳԱՅ 2010-15թթ., ցուցանիշ 4.1, 4.2, 4.3/*:

Յուրաքանչյուր տարի մասնաճյուղի բյուջեից գումարներ են հատկացվում մասնաշենքերի, լաբորատորիաների ու մասնաճյուղի այլ շինությունների վերանորոգման և արդիականացման համար, որի արդյունքում վերոնշյալ կառույցները հնարավորինս կահավորված և տեխնիկապես հագեցված են: ԵՊՀ ԻՄ-ում գործում են ուսումնական 4 լաբորատորիաներ, համակարգչային 4 սրահներ, ինտերակտիվ ուսուցման 2 լսարաններ: Համաձայն գործող պայմանագրի մասնաճյուղի ուսանողները որոշ լաբորատոր փորձեր են կատարում նաև ԵՊՀ-ի լաբորատորիաներում:

Ուսումնական միջավայրի բարելավումը, լինելով մշտապես իրականացվող գործընթաց, հանդիսանում է նաև ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական նպատակներին տանող կարևոր առաջնահերթություն **/ՌԾ, խնդիր I դ/**: Մասնաճյուղում պարբերաբար գնահատվում են լսարանային ֆոնդի և ուսումնագիտական լաբորատոր բազայի վիճակը, հաշվի են առնվում ֆակուլտետների դեկանների և ամբիոնների վարիչների առաջարկները, ըստ այդմ՝ ստեղծվում, տեխնիկապես հագեցվում են լսարանները, համակարգչային սրահները: Կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան մասնաճյուղի լսարանային ֆոնդի, ուսումնագիտական լաբորատոր բազայի առկա վիճակի գնահատմանը, դրանց փուլային արդիականացմանը, նոր լաբորատորիաների ստեղծմանը և ուսումնական ու լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործմանը զուգընթաց՝ ԵՊՀ ԻՄ-ի վարչակազմը խնդիր էր դրել մինչև 2012-13 ուստարվա ավարտը ստեղծել լեզվի ուսուցման մասնագիտացված լինգաֆոնային կաբինետ՝ օտար լեզուների ուսուցման որակը արդի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, ինչը հաջողությամբ իրականացվեց, ինչպես նաև ստեղծել տեխնոլոգիական կարողությամբ համակարգչային նոր լաբորատորիա՝ ապահովված

ինտերակտիվ ուսուցման անհրաժեշտ սարքավորումներով, ինչը բխում է ԵՊՀ ԻՄ-ի ՌԾ-ից /ՌԾ. **Խնդիր I ե/**:

Մասնաճյուղում 2012թ. հիմնվել է ինտերակտիվ ուսուցման լսարան՝ անհրաժեշտ էլեկտրոնային սարքավորումներով /smart-գրատախտակ, պրոյեկտոր, համակարգիչ/, որը ուսանողներին հնարավորություն է ընձեռում, գտնվելով մայրաքաղաքից հեռու, **Skype** ակնթարթային հաղորդակցման միջոցով լսել առաջատար և եզակի մասնագետների:

Հարկ է նշել, որ առկա և հեռակա ուսուցման համակարգերում դասախոսների մեծամասնությունը դասընթացները վարում են տեղեկատվական և տեխնիկական համապատասխան միջոցների և համակարգերի կիրառմամբ, իսկ ինտերակտիվ ուսուցման լսարանում անցկացվող մեծ թվով դասախոսությունները ու կազմակերպվող հանդիպումները ցույց տվեցին, որ անհրաժեշտություն կա ավելացնելու ինտերակտիվ լսարանների քանակը և 2014 թվականին նմանատիպ լսարան հիմնվեց Բնագիտական ֆակուլտետում: Առաջիկայում նմանատիպ լսարան է նախատեսվում ստեղծել նաև Կիրառական արվեստի ֆակուլտետում, որը կնպաստի դասավանդման ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի իրականացմանը:

Կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան մասնաճյուղում շարունակաբար ստեղծվում են նոր ուսումնագիտական լաբորատորիաներ և կահավորվում լսարաններ:

2014թ. սեպտեմբերին վերազինվել են Կիրառական արվեստի ֆակուլտետի արվեստանոցները, վերանորոգվել լսարանները, միջանցքներն ու ուսումնական այլ տարածքները, ստեղծվել են «Դիզայնի» լաբորատորիա և «Հագուստի մոդելավորման» արվեստանոց:

2013թ. «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության բացմանը զուգընթաց անհրաժեշտություն առաջացավ ստեղծել ևս մեկ մասնագիտական լաբորատորիա, որը հիմնվեց 2013-2014 ուստարում: Լաբորատորիայում առկա է 20 համակարգիչ, որոնք միացված են ներքին ցանցին, ապահովված են գերարագ և անվճար ինտերնետ կապով: Տարածքում հասանելի է նաև անվճար ինտերնետային WiFi կապը:

2014 թվականին Տնտեսագիտական ֆակուլտետում բացվել է համակարգչային լսարան՝ մասնագիտական առարկաների /Հաշվապահական հաշվառում, էկոնոմետրիկա, միկրո և մակրոտնտեսագիտություն, վիճակագրություն և այլն/ գործնական պարապմունքներն ավելի արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև դասավանդման ընթացքում տարբեր մասնագիտական նախագծերի կիրառելու համար: Սրահը նախատեսված է գործնական պարապմունք իրականացնող փոքր խմբերի համար, որտեղ կա 11 համակարգիչ՝ գերարագ և անվճար ինտերնետային կապով:

2014թ. մասնաճյուղի և Խաղաղության կորպուսի համատեղ ջանքերով ստեղծվել է անգլերեն լեզվի ուսուցման կենտրոն՝ հագեցած մասնագիտական գրականությամբ և անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով, ԵՊՀ ԻՄ-ի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության ուսանողների գիտելիքների և հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով: Կենտրոնի աշխատանքները համակարգում է Խաղաղության կորպուսի կամավոր Պամելա Ուոտքինսը, որի ջանքերով կենտրոնը շարունակաբար համալրվում է գեղարվեստական գրականությամբ, ուսումնամեթոդական ձեռնարկներով, ամսագրերով, ֆիլմերով և լեզվի ուսուցման համար նախատեսված խաղերով: Կենտրոնի ռեսուրսներից օգտվում են ոչ միայն մասնաճյուղի ուսանողները և դասախոսները, այլև Իջևան քաղաքի դպրոցականները, որոնք ընդգրկված են կենտրոնում գործող «Անգլերեն լեզվի ակումբ»-

ի և «Կինո ակումբ»-ի կազմերում: Կենտրոնը դասընթացներ է կազմակերպում նաև մասնաճյուղի ոչ մասնագիտական բաժինների ուսանողների համար:

2015թ. ապրիլին ֆրանսիական Լիոն քաղաքի «AYO» կազմակերպության հովանավորությամբ մասնաճյուղում ստեղծվել է ֆրանսերեն լեզվի կենտրոն՝ հագեցած ժամանակակից տեխնիկական միջոցներով, շուրջ 800 կտոր մասնագիտական գրականությամբ (մեթոդական և գեղարվեստական), որը հնարավորություն է տալիս ֆրանսերեն լեզվի դասերը վարելու ժամանակակից տեսա-ձայնային մեթոդներով:

Գրադարանի զարգացումը ԵՊՀ ԻՄ-ի կարևորագույն ռազմավարական ուղղություններից է /**ՌԾ, խնդիր VI. բ (կետեր 2, 3, 4)**/: Մասնաճյուղի 120,7 քմ մակերեսով գրադարանն ունի 2 գրապահոց, 2 ընթերցասրահ (84,7 և 47,5 քմ), ինչպես նաև գրադարանի հարևանությամբ գտնվող երկու լսարանները ժամը 14-ից հետո ծառայում են որպես լսարան-ընթերցասրահներ: Էլեկտրոնային պաշարները հասանելի են ընթերցասրահի համակարգիչներից, ինչպես նաև համամասնաճյուղային համակարգչային կենտրոնի թիվ 2 սրահից: 2014թ. թիվ 2 մասնաշենքում ընթերցասրահ հիմնվեց՝ հագեցած Բնագիտական և Կիրառական արվեստի ֆակուլտետների ուսանողներին անհրաժեշտ գրականությամբ: Ուսումնագիտական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար հիմնարար նշանակություն ունի հաստատության գրքային և տեղեկատվական բազան, որը կենտրոնացած է գրադարանում: Տարեցտարի գրադարանի գրքային ֆոնդը համալրվում է ժամանակակից գրականությամբ, համապատասխան տեղեկատվական տարբեր նյութերով, որին նպաստում է անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահի հիմնումը, էլեկտրոնային գրականության հարստացումը: Ուսանողներն հնարավորություններ ունեն օգտվելու ինչպես ԵՊՀ-ի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանի էլեկտրոնային գրքային ֆոնդից /www.lib.ysu.am/, այնպես էլ հանրապետության այլ ֆունդամենտալ գրադարանների էլեկտրոնային պաշարներից:

Մասնաճյուղի գրապահոցներում առկա է շուրջ 14246 միավոր գրականություն և 186 ամսագիր: Գրադարանում քիչ քանակով առկա գրականության թվայնացման շնորհիվ էլեկտրոնային պաշարների ֆոնդը պարբերաբար ավելացվում է: Ընթերցասրահն ունի ավել քան 1700 անուն էլեկտրոնային գրականության հավաքածու՝ դիսկադարան, որը գրադարանային պաշարների մասն է կազմում և ունի էլեկտրոնային ունիվերսալ քարտադարան: Իր ծառայություններով գրադարանն աջակցում է ուսանողների ուսումնառությանը՝ նրանց տրամադրելով մասնագիտական գրքեր, ժողովածուներ, ամսագրեր, էլեկտրոնային գրքեր: Ընթերցասրահն ունի պատճենահանման և տպիչ սարքեր: Ուսանողի ցանկության դեպքում էլեկտրոնային գրականությունը նրան է փոխանցվում էլեկտրոնային կրիչով կամ խտասկավառակով: Գրադարանի միջին տարեկան համալրումը կազմում է մոտ 800 միավոր գրականություն **/ԳԱՑ, ցուցանիշ 4.4, 4.5/**: Գրադարանային ֆոնդում պահանջվող մասնագիտական գրականության բացակայության դեպքում ուսանողներն ստանում են լիարժեք տեղեկատվություն՝ նրանց ձեռքբերման վերաբերյալ: Մասնաճյուղի գրքային ֆոնդը համալրվում է նաև սեփական ձեռքբերումների և նվիրատվությունների հաշվին: 2014թ. հունվարին ստեղծվել է ԵՊՀ ԻՄ-ի գրադարանային խորհուրդ, որի հիմնական նպատակն է ապահովել գրադարանի և մասնաճյուղի հիմնական ուսումնական ու գիտական ստորաբաժանումների փոխադարձ կապն ու արդյունավետ համագործակցությունը:

ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում Մայր բուհը 2013թ. մայիսին գրադարանին նվիրել է ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակված 100 գիրք, որոնց թվում են վերջին տարիներին ԵՊՀ հրատարակչության

ջանքերով և Գալուստ Գյուլպենկյան հիմնադրամի օժանդակությամբ լույս տեսած հայալեզու արժեքավոր գրքեր՝ մենագրություններ, բառարաններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, ինչպես նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով աշխատություններ:

2013 թվականին մասնաճյուղը պայմանագիր է կնքել Երևանի «Բուկինիստ» գրախանութի հետ, համաձայն որի վերջինիս կողմից մասնաճյուղի ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ գրականությունը վաճառվելու է մատչելի գնով:

Վիճակագրական վերլուծություն իրականացնելու նպատակով 2013թ. սեպտեմբերից գրադարանը վարում է իր կողմից իրականացված տարատեսակ ծառայությունների ամենօրյա հաշվառում, որում ներկայացվում է մասնագիտական, գեղարվեստական, էլեկտրոնային գրականությունից և ինտերնետային կապից օգտվողների թիվը, իսկ մեծ պահանջարկ ունեցող մասնագիտական գրականության վերաբերյալ կատարվում են գրանցումներ՝առաջիկայում անհրաժեշտ քանակով ձեռք բերելու նպատակով:

Վերլուծենք մասնաճյուղում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը, հիմնավորելով մոտեցումը և արդյունավետությունը:

Մասնաճյուղն իրականացնում է դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և համապատասխան ընթացակարգերի շնորհիվ կարևորում է մասնագիտական և համակարգչային լաբորատորիաների, գրադարանի, ամբիոնների և այլ ենթակառույցների արդյունավետ և նպատակային օգտագործումը, որոնց արդիականացման և լիարժեք օգտագործման համար հատկացվում են անհրաժեշտ նյութական ռեսուրսներ, իսկ նրանց շարունակական բարելավման համար անհրաժեշտ կլինեն նոր ֆինանսական հնարավորություններ **/ԵՊՀ ԻՄ 2011-15թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլան, խնդիր VI բ, խնդիր VIII ա/**:

ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից ուսանողների, շրջանավարտների և դասավանդողների բավարարվածության վերաբերյալ հարցումները հանդիսանում են որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը: Հարցումների ընթացքում գնահատվում են նաև ուսումնական միջավայրը՝ ուսումնական տարածքները, ռեսուրսները և օժանդակ ծառայությունները: Օրինակ՝ 2011-12 ուստարվա ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների՝ բուհի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքները ներկայացված են ստորև:



Ինչպես երևում է ներկայացված տվյալներից 2011թ.-ին ուսանողները 5 միավորանոց համակարգում առավել բարձր են գնահատել գրադարանի աշխատանքը (միջին գնահատականը՝ 4.42) և համացանցի մատչելիությունը (4.37), իսկ ավելի ցածր գնահատականի են արժանացրել լաբորատորիաների հագեցվածությունը (3.97): Ներքին շահակիցների կողմից ԵՊՀ ԻՄ-ի լաբորատորիաների հագեցվածության վիճակին, սննդի և հանգստի պայմաններին, ընթերցասրահի հարմարավետության և անվտանգության ապահովման համակարգին տրված համեմատաբար ցածր գնահատականների կապակցությամբ պետք է նշել, որ մասնաճյուղը նախորդ հինգ տարիների ընթացքում ձեռնարկել է քայլեր, ինչի վկայությունը 2015թ.-ին անցկացված հարցման արդյունքներն են: Ստորև ներկայացված են առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ անձնակազմների՝ ռեսուրսներից և ծառայություններից բավարարվածության հարցման արդյունքները.

Թիվ	Ձեր բավարարվածությունը.	առկա	հեռակա	միասին
24.1	լսարանների կահավորումից	78,4%	87,6%	79,6%
24.2	լսարանների տեխնիկական միջոցներից	75,8%	85,2%	77,3%
24.3	մասնագիտական գրականության առկայությունից	71,2%	81,2%	72,7%
24.4	ընթերցասրահի հարմարավետությունից,	81,6%	90,0%	83,7%
24.5	ջեռուցումից,	71,6%	84,2%	73,6%
24.6	բուժկետի ծառայություններից,	75,0%	88,8%	77,8%
24.7	անվտանգության ապահովման համակարգից,	69,8%	91,8%	74,1%
24.8	սանիտարահիգենիկ վիճակից,	77,0%	90,6%	80,2%
24.9	սննդի և հանգստի պայմաններից,	75,6%	90,8%	78,9%
24.10	գիտամշակութային կյանքից	79,4%	86,8%	81,8%
24.11	մասնաճյուղում էթիկայի նորմերի պահպանումից	71,0%	80,2%	74,2%





Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտը ԵՊՀ ԻՄ-ի ղեկավարության ուշադրության կենտրոնում է: 2013-14 ուստարում նշված ուղղությամբ նյութական և մարդկային զգալի ռեսուրսներ են հատկացվել, ինչի արդյունքում այսօր ԵՊՀ ԻՄ-ի համակարգչային ցանցն իր ծավալներով, տեխնիկական հագեցվածությամբ և որակական բնութագրերով լիովին համապատասխանում է ներքին շահակիցների պահանջներին: Մասնաճյուղը բավականին միջոցներ է ներդրել միասնական ինֆորմացիոն միջավայր ստեղծելու համար՝ ինտերնետային կապ, համակարգչային ներքին ցանց, SuperVision YSU էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, ինչը հնարավոր է դարձնում ստորաբաժանումների միջև ինֆորմացիայի արագ փոխանակությունը և նվազեցնում թղթաշրջանառությունը: ԵՊՀ ԻՄ-ի ներքին ցանցին միացված են մոտ 140 համակարգիչ: Ստորաբաժանումները, ուսումնաօժանդակ անձնակազմն ու դասախոսներն ունեն էլեկտրոնային հասցեներ և օգտվում են էլեկտրոնային փոստի ծառայություններից: Դասախոսների զգալի մասը ուսանողների հետ շփումն իրականացնում են նաև էլեկտրոնային կապի միջոցով:

Մասնաճյուղն իր ուսանողներին և դասախոսներին ապահովում է գերարագ և անվճար ինտերնետով: Բացի այդ՝ անվճար Wi-Fi անկյուններ կան Բնագիտական ֆակուլտետում և մասնաճյուղի գրադարանում:

ԵՊՀ ԻՄ-ն հրավիրված դասախոսների հանգստի, ստեղծագործելու և գիշերելու համար կառուցել և շահագործում է հարմարավետ ու տեխնիկապես հագեցած հյուրանոցային համալիր: Չորեքշաբթի և կիրակի օրերին մայրաքաղաքից ժամանող դասախոսների տեղափոխումը իրականացվում է «ՀՅՈՒՆԴԱՅ» մակնիշի հարմարավետ ավտոբուսով և/կամ միկրոավտոբուսով:

Ուսումնական միջավայրի գնահատումը տրվում է նաև ամբիոնների և ֆակուլտետների գիտական նիստերի ժամանակ, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու առկա կարիքները և իրականացնել բարելավման գործընթացներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. *ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:*

Վերլուծնք բյուջեի բաշխման արդյունավետությունը և ցույց տանք, արդյո՞ք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Հիմնավորենք մոտեցումը և արդյունավետությունը:

ԵՊՀ ԻՄ-ում ֆինանսական հոսքերի կառավարումը և վերահսկողությունը իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը: 2012 թ. ԵՊՀ ԻՄ-ի բյուջեի հիմնական եկամտային հոդվածներն ունեն այս բաշխվածությունը. ուսման վճարները կազմում են ԵՊՀ ԻՄ-ի բյուջեի մուտքային մասի շուրջ 75 %-ը, պետական ֆինանսավորումը՝ 24 %-ը, այլ եկամուտները՝ 1 % -ը:



Վերջին տարիների ֆինանսական հոսքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեցտարի աճել են ինչպես ԵՊՀ ԻՄ-ի եկամուտները, որը հիմնականում պայմանավորված են վճարովի համակարգով սովորող ուսանողների թվաքանակի աճի և վարձավճարների ավելացմամբ, այնպես էլ ավելացել են ծախսերը, ինչը բացատրվում է աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների, պարտադիր սոցիալական վճարների, ձեռք բերվող ռեսուրսների և ուսումնական միջավայրի շարունակական բարելավման հետ կապված ծախսերի ավելացմամբ */ԳԱՑ, ցուցանիշ 3.4/*:

Ինչպես երևում է ԳԱՑ-ում ներկայացված տվյալներից՝ վերջին հինգ տարիների ընթացքում հաստատության եկամուտները վճարովի ուսուցման համակարգից աճել են 25,1%-ով, իսկ պետական բյուջեից՝ մի փոքր նվազել: Այլ եկամուտների մասով մասնաճյուղը բազմաթիվ անելիքներ ունի: Եկամուտների բազմազանեցումը ԵՊՀ ԻՄ-ի ընթացիկ գերակայությունն է, որի ապահովման համար առաջին քայլերից մեկը զարգացման բիզնես ծրագրի մշակման հանձնաժողովի և ծրագրի նախագծի ստեղծումն է **/հավելված բիզնես հանձնաժողովի վերաբերյալ/**: Այդուհանդերձ, մասնաճյուղի ընդհանուր եկամուտներն աճել են 18,5%-ով */ԳԱՑ. Յուցանիշ 3.4/*:

ԵՊՀ ԻՄ-ի կարևորագույն ռազմավարական նպատակն է բարձրորակ կրթության ապահովումը, որի իրականացմանն է ուղղվում ԵՊՀ ԻՄ-ի ֆինանսական միջոցների ավելի քան 2/3-ը:



Յուրաքանչյուր տարվա ընդհանուր ծախսերի ավելացմանը զուգահեռ աճել են նաև ուսումնական ծախսերը. արդյունքում մեկ ուսանողի հաշվին ընկնող ուսումնական ծախսերն ավելացել են: 2011 թ. համեմատ 2015թ-ին ուսանողների թվի 5%-ով նվազման պարագայում մոտ 23.74 %-ով աճել են ուսումնական, իսկ 16.57 % ուսումնաօժանդակ ծախսերը և 28.90 %-ով՝ մեկ

ուսանողին ընկնող տեսակարար ուսումնական ծախսերը: Ընդհանուր տարեկան ծախսերում ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ավելացել է 8,4 %-ով, ինչը բնութագրվում է տվյալ ոլորտի պայմանների բարելավմամբ */ԳԱՑ, ցուցանիշ 3.8, 3.9/*:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. *ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:*

Վերլուծենք մասնաճյուղում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունը ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետությունը, հիմնավորենք մոտեցումը և արդյունավետությունը:

ԵՊՀ ԻՄ-ում ֆինանսական միջոցները բաշխվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ. կազմվում է բյուջեի նախագիծը՝ հիմքում ունենալով հաշվապահության կողմից հաշվարկված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը (աշխատավարձ, սոցիալական վճարներ, պետական հարկեր, կոմունալ վճարումներ և այլն) և մասնաճյուղի ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը, որը քննարկվում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նիստում և հավանության արժանանալու դեպքում՝ հաստատվում ԵՊՀ ռեկտորի և գլխավոր հաշվապահի կողմից:

Յուրաքանչյուր ուստարվա ավարտին ֆակուլտետները մասնաճյուղի ղեկավարությանն են ներկայացնում հաջորդ ուստարվա ամբիոնային ուսումնական ծանրաբեռնվածությունները, որոնց հիման վրա էլ կատարվում է դասախոսների հաստիքների ձևավորումը և աշխատանքի վարձատրությունը**:** Ռեսուրսների բաշխման մեխանիզմներից է առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա մասնաճյուղի Գնումների, մատակարարման և պահեստավորման բաժնի կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը. բաժինը ստեղծվել է 2013թ. /**Գնումների բաժնի կանոնադրություն**/:

Մասնաճյուղը հետևում է բյուջեի կատարմանը և յուրաքանչյուր եռամսյակը մեկ քննարկվում են բյուջեի կատարողականը, որոշվում կատարվելիք անհրաժեշտ փոփոխությունները, պլանավորվում հաջորդ եռամսյակի եկամուտները և ծախսերը /**ԵՊՀ ԻՄ-ի ներքին աուդիտի կանոնակարգ**/:

ԵՊՀ ԻՄ-ի ներքին աուդիտի կանոնակարգի համաձայն մասնաճյուղի ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ամեն տարի տրվում են անկախ աուդիտորական եզրակացություններ (Մայր բուհում աուդիտ կատարած խումբը աուդիտ է անցկացնում նաև մասնաճյուղում): Դրանցում մասնավորապես նշվում է, որ ԵՊՀ ԻՄ-ի ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ֆինանսական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

2014թ. անկախ փորձագիտական խմբի կողմից մասնաճյուղում անցկացված աուդիտի ամփոփման մեջ ասված է. «Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համախմբված ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2014թ., ինչպես նաև այդ ամսաթվի դրությամբ, ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն ՖՀՄՍ-ների»:

Թեև մասնաճյուղի միջոցները կառավարվում են հնարավորինս արդյունավետ, այդուհանդերձ, դրանց կառավարման և օգտագործման արդյունավետության բարձրացումը,

լինելով ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ընթացիկ գերակայություն, գտնվում է ԵՊՀ ռեկտորի և մասնաճյուղի տնօրենի ուշադրության կենտրոնում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. *ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:*

Վերլուծենք որակի շարունակական բարելավումն ու կայունությունն ապահովելու նպատակով մասնաճյուղի ռեսուրսային բազայի արդյունավետությունը: Հիմնավորենք մոտեցումը և արդյունավետությունը:

ԵՊՀ ԻՄ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն՝ ԵՊՀ ԻՄ-ն նախապես պլանավորում է առաջիկա ֆինանսական տարվա համար պահանջվող ռեսուրսները՝ դրանց գնման գործընթացն ըստ օրենքի պահանջի (մրցույթի հայտարարում, մատակարարների ընտրություն և այլն) իրականացնելու համար: Ռեսուրսները ժամանակին բաշխելու մեխանիզմները և ընթացակարգերը կանոնակարգվում են մասնաճյուղի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրերով և աշխատանքների կատարման ժամանակացույցով և հաշվի է առնված մասնաճյուղի գործունեության առանձնահատկությունները:

Գործող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության գնահատման մեխանիզմ է հանդիսանում է նաև կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգը, որի համար մասնաճյուղը մշակել է համապատասխան կարգ **/«ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ», բաժին 2/,** ըստ որի նախատեսվում է մեկամյա պարբերականությամբ գնահատել ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը, որի հիման վրա, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ռեսուրսների ձեռքբերման հայտերը հասցեագրվում են ԵՊՀ ԻՄ-ի գնումների, մատակարարման և պահեստավորման բաժնին:

Ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ բոլոր կրթական ծրագրերի համար համատեղ, իսկ դրանց բաշխումը՝ ըստ առանձին ծրագրերի ռեսուրսային կարիքների:

Ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման տեսանկյունից կարևորագույն գործոններ են հանդիսանում աշխատաշուկայի պահանջներից ելնելով մասնագիտությունների կրթական ծրագրերի փոփոխությունները և նրանցում ուսանողների թվաքանակը: Քանի որ ընդունելությունը կազմակերպվում է ըստ պլանավորված և ՀՀ ԿԳՆ-ի կողմից հատկացված լիցենզավորման տեղերի թվերի, ուստի ռեսուրսների կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազեցումներ, որպես կանոն, տեղի չեն ունենում: Այդուհանդերձ, ուսանողների թվի որոշակի ավելացման դեպքում մասնաճյուղը կկարողանա համապատասխան քանակի ռեսուրսներ ապահովել, օրինակ՝ լրացուցիչ ծանրաբեռնել դասավանդողներին կամ նոր դասավանդողներ ընդունել աշխատանքի և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. *ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:*

Վերլուծենք մասնաճյուղում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորենք մոտեցումը և արդյունավետությունը:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման բարելավումը մասնաճյուղի ռազմավարական խնդիրներից է /ՌԾ. **Խնդիր V.բ**/: ԵՊՀ ԻՄ-ի ՌԾ-ում նախատեսվում էր ստեղծել միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը ուսանողների և աշխատակիցների համար: Տեղեկատվական ռեսուրսների ժամանակակից չափանիշներին համապատասխան զարգացումը և դրանց արդյունավետ օգտագործման ու մատչելիության ապահովումը ևս ռազմավարական խնդիր է, որի լուծման ուղղությամբ տարվել և տարվում են համապատասխան աշխատանքներ /ՌԾ. **խնդիր VI բ**/:

ԵՊՀ ԻՄ-ի տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարումն իրականացվում է ԵՊՀ ԻՄ-ի միասնական ներքին ցանցով, SuperVision YSU էլեկտրոնային տեղեկատվական համակարգով և կայքէջով:

Տեղեկատվության հավաքման և կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դեռևս 2009թ. մասնաճյուղում ներդրվել է SuperVision YSU տեղեկատվական կառավարման բազմաֆունկցիոնալ ցանցային համակարգը, որի միջոցով իրականցվում է ուսումնական պլանների, ամբիոնների և դասախոսների բեռնվածության ավտոմատ բաշխում, ուսանողների ուսումնական տվյալների հավաքագրում, մշակում և առաջադիմության վերահսկում (այն նաև հիմք է հանդիսանում ուսանողական զեղչերի, փոխատեղումների իրականացման ժամանակ), դիպլոմի համաեվրոպական նմուշի հավելվածի պատրաստում:

ԵՊՀ ԻՄ-ի կայքէջում / www.ijevan.ysu.am / զետեղվում են. 1) ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի, ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումներն ու նիստերի արձանագրությունները, այդ թվում՝ մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից ընդունված բոլոր կանոնադրությունները, կանոնակարգերը և կարգերը, հայեցակարգերը և այլ նորմատիվ փաստաթղթեր, 2)Մասնաճյուղի տնօրենության որոշումներն ու նիստերի արձանագրությունները, 3)Արհբյուրոյի գործունեությունը, 4)Ամբիոնների ուսումնական պլանները, կրեդիտային համակարգի ուղեցույցը, դասացուցակն ու քննաշրջանի արդյունքները, 5)Դեկանի, ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների մրցույթների վերաբերյալ հայտարարությունները, 6)Իրադարձություններ, նորություններ, հայտարարություններ և այլն: Նորմատիվ բոլոր փաստաթղթերը հաստատվելուց հետո հրապարակվում են մասնաճյուղի կայքէջում: Կայքում առանձին բաժնով տեղադրվում են նաև ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուները, շրջանավարտների համար խորհրդատվություններ և հայտարարություններ՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններում:

Հեռակա ուսուցման բաժինը 2014-15 ուստարվանից հիմնել է առանձին կայքէջ (heraka.com), որտեղ ներբեռնվում են ուսումնառության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերը:Ակտիվ գործում է ուսանող-դասախոս էլեկտրոնային շփումը. էլեկտրոնային փոստով ուսանողներին ուղարկվում են ինքնուրույն աշխատանքի հանձնարարություններ, ուսումնական լրացուցիչ նյութեր, գրականություն, և այլն:

ԵՊՀ ԻՄ-ում փաստաթղթաշրջանառությունը կատարվում է միասնական ներքին ցանցով որին միացված են շուրջ 140 համակարգիչներ, և կանոնակարգվում է ԵՊՀ ԻՄ-ի աշխատակազմի կառավարման բաժնի կանոնադրությամբ /**Աշխատակազմի կառավարման բաժնի կանոնադրություն**/: ԵՊՀ ԻՄ-ում գործավարության կազմակերպումն ու իրականացումը կարգավորում է փաստաթղթերի ընդունման, գրանցման և ներքին փաստաթղթաշրջանառության ընթացակարգերը, պարզաբանում մասնաճյուղի գիտական

խորհրդի քննարկմանը ներկայացվող նախագծերի, մասնաճյուղի տնօրենի հրամանների ու այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման ու դրանց շարժի, ԵՊՀ ԻՄ-ի ելից փաստաթղթերի շարժի ու առաքման, կառուցվածքային ստորաբաժանումների փաստաթղթաշրջանառության, փաստաթղթերի էլեկտրոնային պահպանման ու արխիվացման հետ կապված հարցերը:

2012 թվականից ընդլայնվել է տեղեկատվական ռեսուրսների օգտագործման տեխնոլոգիական գործիքամիջոցների կազմը: Մասնաճյուղի ծրագրավորողների ուժերով ստեղծվել, տարբեր ստորաբաժանումներում ներդրվել և կիրառվում են համապատասխան տեղեկատվական համակարգեր ու բազաներ.

-ուսանողների հաշվառման համակարգը՝ Ուսումնամեթոդական վարչությունում,

-ուսանողների հաճախումների, դասացուցակի կառուցման և քննաշրջանների ամփոփման համակարգը՝ ֆակուլտետների դեկանատներում,

- կադրերի հաշվառման և մշակման համակարգը՝ Անձնակազմի կառավարման բաժնում,

- ուսանողների վարձավճարների հաշվառման համակարգը՝ Հաշվապահությունում,

-շրջանավարտների տվյալների հաշվառման և մշակման համակարգը՝ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնում:

Չնայած այս ամենին, պետք է նշել, որ դեռևս ստեղծված չէ մասնաճյուղի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ:

Տեղեկատվության տարածման և հասարակական պատասխանատվության նպատակով 2012թ.-ից մասնաճյուղն ունի հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատու, որի հիմնական գործառույթն է մասնաճյուղի գործունեության, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, հասարակական միավորումների (արհբյուրո, ուսանողական գիտական ընկերություն, ուսանողական խորհուրդ և այլն), տնօրենի և այլ պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկումը մասնաճյուղի պաշտոնական կայքի (ijevan.ysu.am), ինչպես նաև «Երևանի համալսարան» թերթի միջոցով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. *ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:*

Վերլուծենք առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետությունը՝ հիմնվելով շահեկիցների արձագանքների վրա:

ԵՊՀ ԻՄ-ում առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեությունը գտնվում է մասնաճյուղի ղեկավարության անմիջական ուշադրության կենտրոնում: Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով տարին մեկ անգամ, ներքին շահակիցների մասնակցությամբ, քննարկվում և վերլուծության են ենթարկվում իրականացված աշխատանքները, որի ընթացքում պարզվում են այն պատճառները, որոնք խանգարում են նշված ծառայությունների կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետ կատարմանը:

ՄՈՒՀ-ում առողջության և անվտանգության պահպանման ծառայություններից ուսանողների բավարարվածությունը պարզելու նպատակով պարբերաբար իրականացվում են հարցումներ:

Նշված հարցումների ընթացքում թե՛ ուսումնառողների, թե՛ դասավանդողների շրջանում դրական արձագանքներ են գտել լսարանների կահավորումից, անվտանգության ծառայության, բուժկետի և հյուրանոցային համալիրի պայմաններից (Երևանից հրավիրված դասախոսներ):

Անվտանգ և առողջ միջավայրի ապահովման բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի թերացումներից է հատուկ կարիքներ ունեցող անձանց համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պակասը, հետևաբար նրանց ուսումնառության ոչ լիարժեք կազմակերպումը: Խորհրդային ժամանակաշրջանում կառուցված մասնաշենքերում հաշվի չեն առնվել դժվարությամբ տեղաշարժվող մարդկանց կարիքները: Տեղաշարժման, լսողության, տեսողության և այլ խնդիրներ ունեցող մարդկանց համար համապատասխան պայմանների ստեղծումը ֆինանսական մեծ միջոցներ է պահանջում, ինչը դեռևս վեր է մասնաճյուղի ուժերից: Չնայած դրան՝ ներկայումս մասնաճյուղը որոշակի քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ: Թիվ 2 մասնաշենքի առաջին հարկում գտնվող լսարանի մուտքը թեքահարթակի միջոցով հարմարացվել է դժվարությամբ տեղաշարժվող անձանց կարիքներին:

Վերլուծենք մասնաճյուղի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորենք մոտեցումը և արդյունավետությունը:

ԵՊՀ ԻՄ-ում առողջապահական ոլորտի կարևոր ծառայություն է իրականացնում բուհի բուժկետը՝ տեղակայված թիվ 3 մասնաշենքում /բուժկետի տեղաբաշխումը կատարված է՝ հաշվի առնելով տվյալ մասնաշենքից օգտվող ուսանողների, վարչական և դասախոսական անձնակազմի թվաքանակի մեծությունը/:

Բուժկետի աշխատանքային ժամերն են 9^{00}-16^{00}-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր:

Բուժկետն ապահովված է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքով և որոշ սարքավորումներով, որը դեռևս վերազինման կարիք ունի:

Բուժկետում աշխատում է մեկ բուժաշխատող, որը իր պարտականությունների շրջանակում հարկ եղած դեպքերում տեղում ցույց է տալիս անհրաժեշտ առաջին բուժօգնություն, իսկ առանձին դեպքերում ուսանողներին կամ աշխատակիցներին ուղեկցում է քաղաքային պոլիկլինիկա կամ հիվանդանոց՝ հետագա բուժսպասարկման համար:

Մասնաճյուղի ուսանողների և աշխատակիցների առողջության պահպանման, մարմնակրթության գործում զգալի ներդրում ունի «Արտակարգ իրավիճակների և մարմնակրթության» ամբիոնը, որի հիմնական խնդիրը ֆիզիկական դաստիարակության առարկայի ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան ուսանողների կրթական, դաստիարակչական, ինչպես նաև առողջության ամրապնդմանն ուղղված գործունեության և սպորտ-մասսայական միջոցառումների իրականացումն է: Ամբիոնը կազմակերպում է նաև ընդհանուր և սեկցիոն դասընթացներ, մրցույթներ տարբեր մարզաձևերից (փետրագնդակ, վոլեյբոլ, բազկամարտ, ֆուտբոլ և այլն): 2012թ. մասնաճյուղի տղամարդկանց վոլեյբոլի թիմը ԵՊՀ-ում անցկացվող մրցաշարում գրավեց պատվավոր երկրորդ տեղը: 2013 և 2014 թթ. նրանք հավասարը չունեին Իջևան քաղաքի վոլեյբոլի բաց առաջնություններում: Բուհի ուսանողները լավ արդյունքներ են ցուցաբերել նաև փետրագնդակի հանրապետական մրցաշարերում /Հրաչ Ներսիսյանը 2013թ. հանրապետական առաջնությունում գրավել է 3-րդ տեղ: Անի Դավթյանը 2014 թ. հաղթող է ճանաչվել Իջևանի բաց առաջնությունում/:

Համալսարանը հնարավորինս միջոցներ է հատկացնում մարզադահլիճների բարելավման և մարզագույքի ձեռքբերման համար: 2014 թվականին, բացի գործող մարզադահլիճից, ստեղծվեց նաև ժամանակակից մարզասարքերով հագեցած մարզասրահ /վազքուղյակներ, հեծանիվ,

պտտաձող, դահուկ, մերսող սարք և այլն/: Մարզասրահի բացման նպատակն էր բարձրացնել ուսանողների ֆիզիկական պատրաստվածությունը, նպաստել նախատեսված նորմատիվերի հանձնմանը:

ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների և աշխատակիցների հանգստի և առողջության պահպանման ու վերականգնման գործընթացին աջակցում է նաև ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը: ՄՈՒՀ-ի աշխատակիցներն օգտվում են ԵՊՀ-ի՝ Ծաղկաձորի, Հանքավանի և Բյուրականի գեղատեսիլ վայրերում գտնվող հանգստյան տներից, որոնց ուղեգրերից աշխատողներն օգտվում են 50% զեղչված գներով, իսկ Դիլիջանի ամառային ճամբարում ուսանողների հանգիստը կազմակերպվում է անվճար հիմունքներով՝ մասնաճյուղի միջոցների հաշվին:

Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է ԵՊՀ ԻՄ-ի քաղաքացիական պաշտպանության շտաբը՝ մասնաշենքերում գործող քաղպաշտպանության տարհանման հանձնաժողովների, մասնաշենքերի պարետների և ֆակուլտետների դեկանների միջոցով: Համալսարանի բոլոր մասնաշենքերի մուտքերի մոտ փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման սխեմաները: Մասնաշենքերն ունեն անհրաժեշտ թվով մուտքեր՝ ուսանողների տարհանումն արդյունավետ իրականացնելու համար: Թիվ 1 և թիվ 3 մասնաշենքերի 1-ին հարկերում առկա են հարմարեցված թաքստոցներ: Շտաբն իրականացնում է խմբերի ամենամյա ուսուցում, որի արդյունքում, ըստ ծրագրի պատրաստվում են փրկարարներ, հետախույզներ, սանդրուժինայի անդամներ:

Կենտրոնական մասնաշենքում տեղադրված է հակահրդեհային վահանակ՝ անհրաժեշտ սարքավորումներով և հիմնական հոսող ջրին միացված ճկուն խողովակաշար՝ հրդեհի ժամանակ արագ օգտագործման համար: Մասնաշենքերի իրարից հեռու գտնվելու պայմաններում այս ռեսուրսները բավարար չեն և մասնաճյուղը պլանավորում է դրանց թվի ավելացում և անհրաժեշտ սարքերով վերազինում:

Մասնաճյուղի անվտանգության ծառայությունը գործում է 2008թ. նոյեմբերի 1-ից: Շուրջօրյա հերթապահության ռեժիմով իրականացնում է համալսարանի մասնաշենքերի և հյուրանոցային համալիրի գույքի պահպանության, ուսանողների և աշխատակիցների անվտանգության ապահովման գործառույթը: /**ԵՊՀ ԻՄ-ի անվտանգության ծառայության կանոնադրություն**/:

Տնտեսական բաժնի կողմից իրականցվում է մասնաճյուղի սանմաքրման աշխատանքները: Սանմաքրողների թիվը հասնում է 10-ի, տեղաբաշխված ըստ ԵՊՀ ԻՄ-ի մասնաշենքերի, որոնք զուգահեռաբար օգնում են պարետներին՝ միջանցքներում իրականացնելով ցերեկային հերթապահություն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. *ՄՈՒՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:*

Վերլուծենք ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորենք մոտեցումը և արդյունավետությունը:

ԵՊՀ ԻՄ-ում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակա-ության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են

դասավանդողների, շրջանավարտների և ուսանողների ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ անցկացվող հարցումները, կազմակերպվող քնարկումներն ու հանդիպումները:

Շրջանավարտների բավարարվածության հարցաթերթում առկա է ռեսուրսների ու ծառայությունների օգտակարությունը, հասանելիությունն ու արդյունավետությունը գնահատող հարցերի մի ամբողջ շարք, ինչպես նաև կարծիքների և առաջարկությունների առանձին բաժին: Ինչպես երևում է ինքնավերլուծության 7.1 չափորոշչի հատվածում ներկայացված նկարից, հարցվող շրջանավարտներն ընդհանուր առմամբ գոհ են տրամադրվող ռեսուրսներից:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները նույնպես ունեն ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների գնահատման տարրեր, քանի որ հարցաթերթերում առկա է ուսանողների կարծիքների և առաջարկների բաժինը, որտեղ նրանք, ի թիվս այլ հարցերի, իրենց կարծիքն են հայտնում տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների վերաբերյալ: Ուսանողական հարցումները ցույց են տալիս, որ մատուցվող ռեսուրսների և ծառայությունների բարելավմանն ուղղված միջոցառումները հաճախ հիմնվում են դասավանդողների և ուսանողների կողմից այս մեխանիզմով ստացվող տեղեկատվության հիման վրա:

Ուսանողները հնարավորություն ունեն տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ իրենց հուզող հարցերը բարձրացնել և ստանալ պատասխաններ նաև ֆակուլտետների գիտական խորհուրդների ու դեկանատների նիստերի ժամանակ: Բացի այդ՝ արագ արձագանքման արկղերի միջոցով կարող են հարցեր և առաջարկություններ ուղղել ղեկավարությանը:

Չափանիշ 7-ի համար ներկայացնենք վերջին 5 տարվա SWOT վերլուծություն:

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. Մասնաճյուղի գործունեության իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և ռեսուրսների առկայություն 2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մասնաճյուղի տարածքի և ենթակառուցվածքների անհատույց, անժամկետ տրամադրում 3. Անվճար, անսահմանափակ, գերարագ ինտերնետ (օպտիկամալուխային կապուղի) և WiFi կապերի առկայություն 4. Մասնաճյուղում ներքին համակարգչային ցանցի առկայություն և ավտոմատացված էլեկտրոնային համակարգերի առկայություն (Supervision YSU, ուսանողների տվյալների բազա) 5. ԵՊՀ-ի ռեսուրսներից օգտվելու հնարավորություն (գրադարան, տպարան, լաբորատորիա, հանգստյան տներ և այլն) 6. ԵՊՀ-ի կողմից ֆինանսական և նյութական ռեսուրսների պարբերաբար տրամադրումը 7. Օնլայն լսարանների առկայությունը 8. Անվտանգության ծառայության առկայությունը 9. Ռեսուրսների գնահատման մեխանիզմների առկայություն 10. Հրավիրված դասախոսների համար հարմարավետ հյուրանոցի առկայություն 11. Մասնաճյուղի հարևանությամբ սննդի կետերի առկայությունը 12. Սեփական տրանսպորտային միջոցների առկայությունը	1. Տեղական, մասնավոր և միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսական միջոցների տրամադրումը 2. Տարածաշրջանում լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցելը 3. ԵՊՀ կողմից նպատակային ծրագրերի ֆինանսավորում մասնաճյուղում
Թույլ կողմեր (Weaknesses)	**Վտանգներ (Threats)**

1. Առանձնացված ընթերցասրահի բացակայությունը 2. Մասնագիտական գրականության պակասը գրադարանում 3. Որոշ համակարգիչների ոչ արդիական լինելը 4. Հաշմանդամություն ունեցող և հատուկ կարիքներով անձանց համար մասնաճյուղում անհրաժեշտ պայմանների բացակայությունը 5. Լաբորատորիաների թերի հագեցվածությունը 6. Ուսումնական և հետազոտական անհրաժեշտ ֆինանսական անբավարար միջոցները 7. Շենքային ոչ տիպային պայմանները 8. Բուժկետի թերի հագեցվածությունը 9. Մարզադահլիճի անհրաժեշտ սպորտային գույքով պակաս հագեցվածությունը և բաց սպորտային հրապարակի բացակայությունը	1. Այլ ֆինասնական մուտքերի բացակայություն 2. Դիմորդների թվի նվազում 3. Պետության կողմից տրամադրվող թույլ աջակցությունը 4. Տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումը

Մասնաճյուղի առաքելությունն իրականացնելու և նպատակներին հասնելու համար որոշիչ դեր են խաղում ռեսուրսները և ենթակառույցները, քանզի կրթական գործընթացների հաջող ընթացքը և ավարտը անմիջականորեն կախված են մարդկային և նյութական գործոններից: Գործող ենթակառուցվածքներն ունեն հստակ սահմանված գործառույթներ, որոնք բխում են մասնաճյուղի ռազմավարական ծրագրից:

Նյութական ռեսուրսների ավելացման ուղղությամբ տնօրենությունը նախատեսում է վարել այնպիսի քաղաքականություն, որպեսզի ընդլայնվեն արտաքին շահակիցների շրջանակները, գտնվեն ֆինանսական հոսքերի ավելացման նոր ուղիներ և ուսումնասիրվեն կրթական լրացուցիչ ծառայություններ մատուցելու հնարավորությունները:

Մասնաճյուղի ենթակառուցվածքների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար նախատեսվում է.

- ձեռք բերել ժամանակակից տեխնիկական սարքավորումներ,
- ավելացնել և բազմազանեցնել ֆինանսական մուտքերը,
- պահպանել ուսման վարձավճարները (այլ ՄՈՒՀ-երի համեմատ մատչելի՝ հաշվի առնելով տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը),
- ավելացնել բուժկետի հագեցվածությունը,
- ապահովել մարզադահլիճի հագեցվածությունը ,
- պարբերաբար թարմացնել մասնագիտական գրականությունը,
- վերազինել ուսումնական լաբորատորիաները ,
- հնարավորինս հարմարեցնել շենքային պայմանները՝ համալսարանական միջավայրի պահանջներին: